№ 200 Հոկտեմբերի 28 (Նոյեմբերի 9) 1881 Հոկտեմբերի 28 (Նոյեմբերի 9) № 200

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբ., կէս տարվանը 6 րուբ.:
Առանձին համարները 5 կոպէկով
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի «Տնտեսական ընկերութիւն».—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայերը և Յոյները. Գերմանիա. Ֆրանսիա. Աւստրո-Ունգարիա. Նամակ Թիւրքիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կ. ՊՕԼՍԻ „ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ“

„Մշակի“ ներկայ համարում տպում ենք խմբագրին ուղղված մի նամակ, որի մէջ նամակագիրը ցանկութիւն է յայտնում որ մենք քննենք Կ. Պօլսի մէջ նորերումս հիմնված „Տնտեսական ընկերութեան“ կանոնադրութիւնը, անուանելով մեզ սկզբնապատճառ այդ ընկերութեան հիմնարկութեան.

Նամակագիրը մեզ շատ մեծ պատիւ է անում, անուանելով մեզ ինիցիատոր այդ ընկերութեան. Ճշմարիտ է մենք ոչ թէ միայն տնտեսական մի ընկերութեան հարց ենք զարթեցրել, բայց և շատ տարիներ սրանից առաջ մեր կարողութեան չափ նպաստել ենք և „Արարատեան“ ընկերութեան կազմակերպվելուն և մեր դրամական հանգանակութիւններով նրա նիւթական գոյութեանը. „Մշակն“ էր, նոյնպէս, որ յարուցեց Կ. Պօլսի երեք ընկերութիւնների միացման խնդիրը և աջողացրեց այդ միութիւնը, անդադար կրկնելով, թէ երեք ընկերութիւններն էլ մի և նոյն նպատակներ ունենալով, թուլացնում են իրանց ուժերը ջոկ ջոկ գործելով.

Բայց ինչքան էլ նպաստած լինէինք թէ „Արարատեան“, թէ „Միացեալ“ և թէ վերջապէս „Տնտեսական“ ընկերութեան կազմակերպութեանը, այդ ընկերութիւնների ինիցիատիվը մենք չենք կամենում ամբողջութեամբ մեզ վերաբերել, մանաւանդ որ նրանց ոչ մէկի կազմակերպութեան ձևը ամբողջութեամբ չէր համապատասխանում մեր գաղափարին:

Մի կողմից այդ բոլոր ընկերութիւնների ձևը չէր համապատասխանում կատարելապէս մեր համոզմունքին ու գաղափարին, իսկ ուրիշ կողմից նրանց գործունէութեան կենտրոնը, հակառակ մեր քարոզած մտքին, մնում էր միշտ Կ. Պօլիս և ոչ թէ նոյն ինքն Հայաստանը: Մենք անդադար կրկնում էինք, որ ոչ մի ընկերութիւն Թիւրքաց հայերի մէջ աջողվելու չէ, մինչև որ կը գործի Հայաստանից դուրս, փոխանակ նոյն ինքն Հայաստանում գործելու.

Կ. Պօլսի մէջ նոր հիմնված „Տնտեսական“ ընկերութեան կանոնադրութիւնը մենք ստացանք քանի մի շաբաթ սրանից առաջ, բայց աւելորդ համարեցինք տպագրել այդ կանոնադրութիւնը մեր լրագրի էջերում, նախ՝ որովհետև մենք խեղդված ենք նիւթերով և երկրորդ՝ որ նոյն իսկ կանոնադրութեան տպագրելը առանց քննադատութեան մեր կողմից, ոչինչ հետաքրքրութիւն չէր ունենայ մեր ընթերցողների համար, ոչինչ օգուտ էլ չէր տայ Թիւրքաց հայերին.

Այդ ընկերութեան կանոնադրութիւնը, դժբաղդաբար, ինչպէս Կ. Պօլսի հայերի բոլոր այդ տեսակ կանոնադրութիւնները, իր նպատակի կողմից շատ անորոշ է և բուն նպատակին նուիրված է ամբողջ ութ երեսի մէջ մի տող միայն, այն ինչ բոլոր մնացած յօդուածները մանրամասնաբար խօսում են ընկերութեան ներքին վարչութեան կազմակերպութեան մասին:

Այսօր մենք կը բաւականանանք այս մի քանի նկատողութիւններով նոր հիմնված ընկերութեան մասին, ուրիշ անգամ թողնելով ընկերութեան կանոնադրութեան մանրամասն քննութիւնը մի մշակված բանասիրական յօդուածում:

Դարձեալ կաւելացնենք մի նկատողութիւն մեր ներկայ յօդուածին. մեր խոր համոզմունքն է, որ Թիւրքիայի հայերը երբէք չեն կարողանայ հիմնել մի նպատակայարմար ընկերութիւն Հայաստանի համար, մինչև որ իրանց գործունէութեան գլխաւոր բանակը չեն տեղափոխի Հայաստան, այլ կը մնան Հայաստանից հեռու, այդ երկրին օտար, նրա համար խորթ Կ. Պօլսի մէջ, առանց ճանաչել ուզենալու, առանց ուսումնասիրել ձգտելու իրական Հայաստանի դրական պէտքերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 19-ին

Շատ ժամանակ չէ, ինչ Բագուն դարձրել է իր վրա մի խումբ վաշխառու հարստահարիչների, մի խումբ արկածախնդիրների, և մի խումբ համեստ աշխատաւորների ուշադրութիւնը:

Սրանք ամենը թողած, ազգ, հայրենիք, տուն, ընտանիք, շտապել են գալ այստեղ, մէկը ապրուստի, միւսը հարստանալու միջոցները որոնելու, և սրանցից ամեն մէկը պէտք է ասած, որ իրանց նախագծի համեմատ, ինչ ինչ չար ու բարի ճանապարհներով և հնարներով, հասնում են իրանց նպատակին:

Առաջինները մեր վաճառական դասն է, ամենաչնչին բացառութեամբ. սրանց մեծ մասը հարստահարողների մի խումբ են կազմում:

Եթէ մի առ մի քննենք նրանց գործունէութիւնը վաճառականական ասպարիզում, կը հասնենք այն եզրակացութեան, որ նրանք հրէաներից գերազանցում են իրանց գործունէութեամբ: Ուրեմն և հարկաւոր չէ երկար խօսել նրանց վերաբերմամբ. բաւական է ասել որ մի երկու հարիւր րուբլ մայր գումարով սկսում են մի որ և է վաճառականական գործ, և ամենակարճ ժամանակամիջոցում տասը հազարներից են խօսում: Ուրեմն մեղք չէ նրանց վաշխառու և հարստահարիչ ածականը տալ, քանի որ մի այլ ճանապարհով անկարելի է այդպէս շուտ հարստանալ:

Երկրորդները արկածախնդիրներն են. այս բառով ես ճանաչում եմ այն հայ երիտասարդներին, որոնց աւելի յարմար է կոչել «չաթուքաւանիներ», որոնցից մէկը իր հօր տունն է քանդել, մի այլը Պետերբուրգում 9—10 տարի Պանսիոնատութեամբ է անցուցել, միւսը կառավար է եղել Ղարսի կուսում. մի մէկն ասեմ: Այսպիսիների թիւը այստեղ բաւական մեծ է, որոնց մէջ շամախեցիք մեծամասնութիւն են կազմում:

Ցրուած այստեղի Սև—քաղաք ասված քաղաքամասում, ուր նաւթի գործարաններն են գտնվում, մէկը ներկարար է, մէկը [illegible], դրգան կառող, հարբեցող, միւսները սպանդալ բարձրացնողներ, չալլաղաններ, և հազար ու մի այլոցները: Պարծեցէք սիրելի համաքաղաքացիք, որ այդպիսի ներկայացուցիչներ ունէք այստեղ. ամենից ետ հասարակական գործերում, ամենից առաջ չալլաղանութեան մէջ, օրինակ առէք հայրենական քաղաքներից, և ուղղեցէք ձեր զաւակների փչացած բարքը:

Իսկ վերջինները, որոնք որ ճշմարիտ գոյութեան կռւի մէջ են, այդ համեստ արհեստաւորներն են. արտաքին եւրոպականութիւնը սրանց մէջ աւելի քայլեր է արել, քան մի որ և է հայ գաւառակարգի մէջ. հին արհեստները, ինչպէս էին ասիական գերձակութիւնը, դարբնութիւնը, մաշկակարութիւնը, [illegible], ոսկերչութիւնը, տեղի են տալիս նոր, եւրոպական դարբնութեան, կօշկակարութեան, ոսկերչութեան և այլն, թողնելով մի փոքրիկ հետք մնացորդ, որը հեռու չէ այն ժամանակը երբ պիտի բոլորովին խափանվի, և այն ժամանակ հայ արհեստաւորը կարող պիտի լինի մրցել եւրոպացի արհեստաւորի հետ: Հայ ոսկերիչը ի բնէ գովված, ներկայումս էլ որ աւելի յառաջադիմութիւն է անում, և աւելի լաւ կատարելագործվում. նրա ձեռից դուրս են գալիս ամենանուրբ և գեղեցիկ ճաշակով քանդակագործած, ոսկէ և արծաթէ զարդեր: Հայ կօշկակարը ազատ մրցում է գերմանացի կօշկակարի հետ. երեք տարի աշակերտելուց յետոյ նա իր վարպետից վատ չէ գործում: Բագուն ներկայումս հինգ հարիւրից աւելի հայ կօշկակար ունի, որոնցից շատերը ուրիշ գործ ու արհեստով են պարապվում, օրինակ տակառագործութեամբ: Համեմատաբար տակառագործութիւնը հեշտ արհեստ է և օգտաւէտ, այս պատճառով շատ ուրիշ արհեստաւորների էլ ուշադրութիւնը գրաւել է:

Եթէ ճշմարիտ է պ. Նիկողոսեանի գրածը թէ Կ. Պօլսում ոչ մի հայ կօշկակար չէ գտնվում, Բագուն այդ դէպքում կարող է 300 ընտիր հայ վարպետներ տալ Կ. Պօլսին:

Նոր արհեստներ, ինչպէս է մաղագործութիւնը, ժամագործութիւնը, ներկարարութիւնը, կարի մեքենայ կարկատելը, գրաշարութիւնը, երկաթաթերթագործութիւնը, սեղանագործութիւնը, պատկերահանութիւնը,—սրանք բոլորը հայերի ձեռին են, և որ գլխաւորն է, պէտք է ասած որ հայերը այդ արհեստները խղճմտաբար են տանում:

Ինչպէս ասացի, դրանք միայն արտաքին կողմից եւրոպականացած են, իսկ ներքին կողմերը քննես, կը նկատես, որ նոյն սովորութիւնն են, ինչ իրանց հայրերն են եղել: Օրինակ, անվայել կերպով աշակերտին ծեծ տալ, քլոց տալ, վարվել հետը միշտ անողորմաբար, արհեստը մի կողմ թողած տնային գործերով պարապեցնել, և այլն: Բարեկամական խորհուրդ կը տանք, որ այստեղ ես օրինակ առնեն եւրոպացի արհեստաւորից, որը քլոցների մէջ անգամ ընտրողութիւն է անում, ուր մնաց ծեծելը: Բայց միթէ մենք խիղճ չունենք, որը թելադրէ մեզ, ի բարին գործ դնելու իրան: Եւրոպացիներից շատ բան պիտի սովորենք, բայց միթէ մենք ամեն բանի մէջ պէտք է նրանց դիմենք սովորելու. մտածենք որ ծեծը ֆիզիկապէս, իսկ անվայել քլոցները բարոյապէս կարող են փչացնել աշակերտին:

Մի խորհուրդ ևս այս է. չիտակ խօսք տալ և կատարել. այդ ամեն մի հայ արհեստաւորի սրբազան պարտքը պիտի լինի. ինչպէս նկատվում է, մեր մէջ չիտակ խօսք տալ ու կատարելը գոյութիւն չունի. մէկը մեզանից մի բան պէտք է շինէ, նա պատուիրողին ասում է, գուցէ. «վաղը անպատճառ պատրաստ կը լինի», բայց մի շաբաթ քաշ է տալիս էգուց, էգուց ասելով. այդ լաւ բան չէ, մինչև անգամ մեծ ամօթ:

Ես միշտ իմ արհեստակիցներիս հետ խօսակցելիս, երբ հարցրել են թէ, «արդեօք Կ. Պօլսում երկաթագործութիւնը հայերի ձեռին է», ես պարծենալով պատասխանել եմ, «ինչպէս չէ. այնտեղ փաշայութիւնը, մինիստրութիւնը, գործարանները հայերի ձեռին են, ինչպէս կարելի է որ երկաթագործութիւնը նրանց ձեռին չը լինի»: Բայց մեր կարծիքը սխալ է յայտնվում, պ. Նիկողոսեանի գրածի համեմատ: Այնտեղ էլ գործարանը հայի ձեռին է (Դադաճեան), այստեղ էլ. այնտեղի գործարանում էլ վարպետները այլազգի են, այստեղ էլ, իսկ մշակը,—մշակը, միշտ հայ է ու հայ:

Այս կողմից էլի Բագուն գերազանց է Կ. Պօլսից. ինչքան այստեղ ճնշված են հայերը օտար վարպետների ձեռին, այնու ամենայնիւ հայ երկաթագործը նման է այն ծաղկին, որի ծաղկելուն արգելք են լինում փշերը, և որը գարնան գալուն պէս բացում է իր նախշուն տերևիկները և նայողին զմայլեցնում, այդպէս էլ նա մի օր հազար չարչարանքից յետոյ, արժանանում է վարպետ կոչվել, և գործում է լաւ, քան շատ ռուսներ և գերմանացիներ: Հայ երկաթագործներին, համեմատելով միւս հայ արհեստաւորների հետ, ազգային կէտից նայելով, առաջինները աւելի գերազանցում են վերջիններից ազգասիրութեամբ և ընթերցասիրութեամբ, որ և շատ մխիթարական է: Իբրև վկայ ասածիս ճշմարտութիւնը հաստատելու համար այն է, որ մի քանի տարի առաջ ինձ աջողվեց միայն Ամիրեանի գործարանում ժողովել 20 ր. «Արարատեան ընկ.» օգտին, և այն ժամանակ պէտք է ասած, որ այնտեղ հայերը քիչ էին: Լրագիրներ կարդալ և հայոց հարցով հետաքրքրվել այդ սովորական բան է. դա էլ շատ մխիթարական է: Սրանք, մեր արհեստաւորները, իրանց իդէալներ, կազմակերպված իդէալներ ունեն: Եթէ, օրինակ, հարցնում էք մի անուս աշակերտի. «Ի՞նչու ես սովորում այդ արհեստը».—«Որ ուստա դառնամ»—պատասխանում է նա.—Յետոյ ինչի. շարունակում էք.—Որ հայոց ազգը լուսաւորեմ, աւելացնում է աշխատող պատանին:—Հա սիրելիս, ասում էք նրան, աշխատիր, որ հայոց ազգը լուսաւորես:

Հայ պատանիներ, այս փոքրիկ անուս տղայից օրինակ առնելու էք:

Ալէքսանդր Աբէլեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 հոկտեմբերի

«Մշակի» ինիցիատիվով զարթած խնդիրներից մէկն էլ իրագործվեցաւ. «Տնտեսական միութիւնը» իրագործված իրողութիւն է Կ. Պօլսի մէջ:

Սակայն պէտք է աշխատել հենց իր սաղմի մէջ չը խեղդել նրան: Լրագրական յօդուածներից արդէն երևում է, որ կրկին սկսել են տարաձայնութիւններ այդ ընկերութեան կանոնադրութեան, նրա կազմակերպութեան ձևի վրա....

Քանի որ ռուսահայերիս վրա բարոյական պարտք կայ մասնակցել այդ ընկերութեանը մեր դրամական օժանդակութեամբ և նպաստներով, կարևոր է, որ այդ խնդրում ռուսահայ մամուլը, մանաւանդ այդ գործի ինիցիատորը, «Մշակ» լրագիրը, յայտնի իր որոշ կարծիքը, իր պրոգրամը կանոնադրութեան մասին, որովհետև ռուսահայ մամուլը գուցէ աւելի մօտ ծանօթ է իրական Հայաստանին ու հայաստանցուն, իր բազմակողմանի պէտքերով, կարիքներով, քան Կ. Պօլսի հայ մամուլը, որ Բոսֆորի ափերում նստած, շատ քիչ տեղեկութիւն ունի իրական Հայաստանի վրա:

Յոյս ունենք, որ «Մշակը» չի զլանայ իր զօրեղ միջամտութիւնը այս հարցում:

Մենք կը կցենք սրան և մի նկատողութիւն: Ընկերութեան կանոնադրութիւնից, որ տպվեցաւ «Մեղու Հայաստանի» լրագրի մէջ, տեղեկանում ենք, որ ընկերութեան կենտրոնը լինելու է Կ. Պօլսում: Այս կէտը մենք չենք կարողանում հասկանալ: Ի՞նչ կարիք կայ անպատճառ ընկերութեան կենտրոնը Կ. Պօլիս համա-